



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

### COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

#### 1.4 (30)

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yarlyan

**ՍՏՈՒՅԳ ՓԱՍՏԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԱՆՎԱՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Անվանարկումը իրավական համապարփակ հասկացություն է, որը բնութագրվում է որպես անձի հեղինակությունն արատավորող ցանկացած իրավախախտում: Արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ ավանդաբար առանձնացվում են անվանարկման երեք տեսակներ՝ slander, libel և insult, ընդ որում, առաջին երկուսը բնույթով համապատասխանում են զրպարտությանը և տարանջատվում են ըստ արտահայտման ձևի (բանավոր կամ անցողիկ՝ slander, և գրավոր կամ մնայուն՝ libel), իսկ insult-ը նույնացվում է վիրավորանքի հետ: Տարբերակվում են նաև անվանարկման *per se* և *per quod* ձևեր: Առաջինն անվանարկումն է այնպիսի արտահայտությամբ, որն իր բովանդակությամբ դատարանն ընդունում է որպես անձի համբավն արատավորող, և այդ պարագայում հայցվորից պահանջվում է ապացուցել միայն իր մասին իրականությանը չհամապատասխանող տվյալների հրապարակման փաստը: Երկրորդն անվանարկումն է արտահայտությամբ, որը տուժողին վերագրում է հանցագործության կատարում, առևտրային, գործարար կամ հանրային գործունեության մեջ անազնիվ գործելակերպ, զազրելի հիվանդություն կամ կնոջը՝ թեթևաբարո վարքագիծ, որի դեպքում հայցվորը պետք է ապացուցի նաև իր հեղինակության արատավորման և դրա հետևանքով իրեն այնպիսի իրական վնաս պատճառելու փաստը, որը կարող է չափվել նյութական արժեքով [1]:

Իրավաբանական դոկտրինայում և բացատրական բառարաններում հանդիպում են անվանարկման հասկացության տարբերվող բնորոշումներ. աղբյուրների մի մասում անվանարկումը բացատրվում է որպես անձի մասին ինչպես իրականությանը չհամապատասխանող, այնպես էլ իրականությանը համապատասխանող վարկաբեկիչ փաստերի (տեղեկությունների) տարածում [2], իսկ մյուս մասում՝ միայն իրականությանը չհամապատասխանող վարկաբեկիչ փաստերի (տեղեկությունների) տարածում [3]: Էրդելեվսկին տարանջատում է անվանարկման հետևյալ տեսակները՝

- ա) անվանարկող կեղծ փաստերի դիտավորյալ հրապարակում, այսինքն՝ զրպարտություն կամ կեղծ անվանարկում,
- բ) անվանարկող կեղծ փաստերի հրապարակում առանց դիտավորության,
- գ) անվանարկող ստույգ փաստերի հրապարակում կամ հավաստի անվանարկում [4]:

Ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկում առկա է այն դեպքերում, երբ անձի մասին նրա մասնավոր կամ ընտանեկան կյանքին վերաբերող և դրանց գաղտ-

նիությունը խախտող տեղեկություններ են հրապարակվում այդ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով:

Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտումը հաճախ ուղեկցվում է ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկմամբ: Լինում են դեպքեր, երբ թեև այդ ստույգ փաստերը բացահայտում են անձի՝ օրենքին չհակասող, իրավաչափ արարքները (օրինակ՝ նուդիստական լողափ հաճախելը), բայց ունակ են նսեմացնելու նրա հեղինակությունը, քանի որ այդ արարքները հասարակության տարբեր շրջանակներ կարող են միանշանակորեն չընդունել: Հարց է առաջանում՝ արդյո՞ք հրապարակված փաստերի հավաստի լինելու դեպքում հնարավոր է խոսել անվանարկման մասին: Այս հարցն առաջին անգամ լայն քննարկման արժանացավ 2009 թ.-ին ԱՄՆ-ում «Նունենն ընդդեմ Սթեփլզի» գործի առնչությամբ: ԱՄՆ Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով այն փաստը, որ հրապարակված փաստերի հավաստիությունն ապացուցելը գրապարտության հայցից բացարձակ պաշտպանության միջոց է և բացառում է պատասխանատվությունը, հավելեց, որ եթե ստույգ տվյալների հրապարակումը կատարվել է անձին անվանարկելու փաստացի դիտավորությամբ (actual malice), ապա պետք է հանգեցնի պատասխանատվության: Թեև այս նորմը նախատեսված է Մասաչուսեթսի նահանգային օրենսդրությամբ, սակայն դատարանները կիրառել են միայն հանրային անձանց անվանարկման գործեր քննելիս [5]: Նունենի գործով վճիռը շրջադարձ էր ամերիկյան նախադեպային իրավունքում: Այն թեև տեսաբանների քննադատությանն արժանացավ, սակայն պետք է փաստել, որ սրանով ողջամիտ լուծում տրվեց խնդրին. համաչափության սկզբունքի պահպանման դեպքում այս կարգավորումը արդյունավետորեն կարող է կիրառվել անվանարկման նպատակով անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիության խախտման ցանկացած դեպքում:

Իրավաբանական տեսական աղբյուրներում, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում քիչ չեն հանդիպում հայեցակարգերն, որոնց համաձայն՝ և՛ անձի հեղինակությունը, և՛ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը սերտորեն փոխկապված են [6]: Այդ տեսակետը հիմնավորվում է նրանով, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտումը հանգեցնում է տուժողի հեղինակության և պատվի նսեմացման: Մասնավոր կյանքին վերաբերող որոշակի փաստեր չհրապարակելու շահագրգռվածությունը նպատակ ունի պաշտպանելու անձի հեղինակությունը:

«Սահմանադրության [7] 31-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: Մարդու մասնավոր կյանքը նրա անձնական կյանքի այն կողմն է, որն անձեռնմխելի է այլոց համար: Անձի ընտանեկան կյանքը նրա ունեցած ընտանեկան հարաբերություններն են, որոնք ընդգրկում են ընտանիքի անդամների՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների) միջև կապերը: ՄԻԵԴ-ը, այնուամենայնիվ, չի սահմանափակում ընտանեկան հարաբերությո-

յունները միայն վերը նշված շրջանակով, և դրանց շարքում դիտարկում է նաև առնվազն մոտ ազգականների միջև հարաբերությունները, քանի որ դրանք ևս կարող են էական դերակատարում ունենալ ընտանեկան կյանքում: Ընտանեկան կապերը պետք է դիտարկել ոչ թե զուտ իրավաբանական, այլ ձևական տեսանկյունից, քանի որ դրանք առաջանում են անկախ այդ հարաբերություններն իրավաբանորեն (չ)ձևակերպելու հանգամանքից [8]: Այսպիսով՝ ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկմամբ միաժամանակ խախտվում են սահմանադրական երկու իրավունքներ՝ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքները, կոնվենցիոն երկու հիմնարար իրավունքներ՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և հեղինակության պաշտպանության իրավունքները: Այնուամենայնիվ, Հայաստանը որդեգրել է բազմաթիվ երկրներում (այդ թվում՝ Գերմանիա [9], Ավստրիա [10], Ռուսաստան [11], Չեխիա [12], Լատվիա [13]) գործող այն ընդհանուր սկզբունքը, որ անվանարկումը պատասխանատվության հիմք է միայն այն դեպքում, երբ անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի արատավորման նպատակով տարածված տեղեկությունները կեղծ են:

Ստորև ներկայացվում են ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկման առնչությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի առարկայական որոշ խնդիրներ և դրանց լուծման առաջարկներ՝

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է պատվի, արժանապատվության և գործարար համբավի արատավորման երկու եղանակ՝ վիրավորանքի և զրպարտության միջոցով: Երկուսն էլ անվանարկման տարատեսակներ են: Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է, ընդ որում՝ եթե հրապարակային արտահայտությունը հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է հանրային գերակա շահով, ապա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է վիրավորանք չհամարվել: Զրպարտությունն անձի վերաբերյալ փաստացի այնպիսի տվյալների (statement of fact) հրապարակումն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը [14]: Միաժամանակ, անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող և նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող փաստացի տվյալների հրապարակումը չի համարվում զրպարտություն, եթե դա տվյալ իրավիճակում և բովանդակությամբ պայմանավորված է հանրային գերակա շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտացիությունը (աղբյուրում՝ ճշմարտությունը) և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները: Հավասարակշռվա-

ծությունը վերաբերում է ներկայացվող տվյալների և հանրային գերակա շահի հարաբերակցությանը: Այսինքն՝ տվյալների հրապարակումը չպետք է պարունակի զրպարտող տեղեկություններ, որոնք չեն առնչվում այդ խնդրին և դուրս են մնում հանրային գերակա շահով պայմանավորված թույլատրելի շրջանակներից: Բարեխղճությունը ենթադրում է փաստացի տվյալների՝ ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք: Ըստ էության, եթե անգամ հրապարակված փաստացի տվյալները կեղծ են, սակայն ողջամտության սահմաններում ձեռնարկվել են միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև տվյալները ներկայացվել են հավասարակշռված և բարեխղճորեն, ապա հրապարակված փաստերը «հավասարեցվում են» ստույգ փաստերի: Պետք է նկատել, որ հրապարակված արտահայտությունը կամ փաստացի տվյալը համապատասխանաբար վիրավորանք և զրպարտություն չհամարելու համար հանրային գերակա շահի իրավական նշանակությունը դրվում է տարբեր հարթությունների վրա. առաջին դեպքում այն որպես հիմք դրսևորվում է ինքնուրույն, երկրորդ դեպքում՝ եթե միաժամանակ առկա է նաև մյուս պայմանը: Կարծում ենք՝ 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 2-րդ պարբերության նպատակները համընկնում են, հետևաբար, դրանցով սահմանված չափանիշները ևս պետք է նույնական լինեն: Հիմք ընդունելով որոշ երկրների (Կանադա [15], Ավստրալիա [16]) փորձը՝ հակված ենք այն մտքին, որ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է և՛ վիրավորանքի, և՛ զրպարտության դեպքում: Ուստի, առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենսգրքի *հմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արարների) և պայմանավորված է հանրային գերակա շահով*»:

2. ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 151-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումը, այն է՝ եթե քաղաքացուն պատճառվել է բարոյական վնաս նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող գործողությամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, դատարանը կարող է իրավախախտի վրա դնել պատճառված վնասի դրամական փոխհատուցման պարտականություն: Այսինքն՝ երբ բարոյական վնաս է պատճառվում անձնական ոչ գույքային իրավունքների խախտմամբ կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգությամբ, վնասը փոխհատուցվում է անկախ նրանից, թե նման փոխհատուցում օրենքով հատկապես նախատեսված է, թե ոչ, մինչդեռ գույքային իրավունքների խախտման դեպքում այդպիսի փոխհատուցում նախատեսող հատուկ օրենքի առկայությունը պարտադիր է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 և ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 150-րդ հոդվածները սահմանում են ոչ նյութական բարիքների հասկացությունը, ընդ որում՝ բառացիորեն նույն բովանդակությամբ, այն



է՛ ոչ նյութական բարիքները, սույն օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան, պաշտպանվում են դրանցով նախատեսված դեպքերում ու կարգով, ինչպես նաև այն դեպքերում ու այն սահմաններում, որոնցում քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների օգտագործումը բխում է խախտված ոչ նյութական իրավունքի էությունից և այդ խախտումների հետևանքների բնույթից: Փաստորեն, այս իրավական նորմի ձևակերպումը թույլ է տալիս հնարավոր համարել անձնական ոչ գույքային իրավունքների խախտման դեպքում քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների օգտագործումը, մասնավորապես՝ ոչ նյութական վնասի հատուցումը, եթե անգամ դրանք տվյալ անձնական ոչ գույքային իրավունքի պաշտպանության համար ուղղակիորեն նախատեսված չեն օրենքով: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Կարծում ենք՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 150-րդ և 151-րդ հոդվածները համահունչ են և ապահովում են օրենսգրքով նախատեսված անձնական ոչ գույքային բոլոր իրավունքների ու ոչ նյութական բարիքների պաշտպանությունը, ինչը չի կարելի ասել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կապակցությամբ՝ համադրելով վերոնշյալ 162.1 և 17-րդ հոդվածների դրույթները: Ուստի, առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը փոփոխել և խմբագրել հետևյալ բովանդակությամբ. *«Եթե քաղաքացուն պատճառվել է բարոյական վնաս նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող կամ ոչ նյութական բարիքների դեմ ունեցող գործողությամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, դատարանը կարող է իրավախախտի վրա դնել պատճառված վնասի դրամական փոխհատուցման պարտականություն»*: Սա հնարավորություն կտա պրակտիկայում արդյունավետորեն իրագործելու Քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի նպատակները:

3. Հարկ է նշել, որ 2015 թ. -ից գործում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը [17], որի կարգավորման առարկան կազմում են միայն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները: Ընդ որում, անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերվող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Սա նշանակում է, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով չեն կարգավորվում այն դեպքերը, երբ առանց անձի համաձայնության այլ անձանց կողմից ապօրինաբար հրապարակվում են նրա մասնավոր կամ ընտանեկան կյանքին վերաբերող տվյալներ: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը խախտելու համար պատասխանատվությունը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.17 հոդվածով [18]: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենս-

գիրքը պատիժ է նախատեսում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելու կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելու կամ հավաքելու կամ պահելու համար, եթե դրանք նախատեսված չեն օրենքով: Այս դեպքում պատիժը տուգանք է՝ 200.000-ից 500.000 դրամի չափով կամ կալանք՝ մեկից երկու ամիս ժամկետով [19]: Այս հանցակազմը ընդգրկում է հենց խնդրո առարկա իրավիճակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրությունը հնարավորություն է տալիս կյանքի և առողջության դեմ հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի դեմ քաղաքացիական հայց ներկայացնել դատարան՝ պահանջելով պայմանագրային պարտավորություններ, ինչպես նաև զինվորական ծառայություն, ոստիկանական ծառայություն և այլ համապատասխան պարտականություններ կատարելիս քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում («քաղաքացիական օրենսգրքի 1077-րդ հոդված») առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանել ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկմամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հնարավորություն: Ընդ որում՝ լրացումը կարող է կատարվել ինչպես 1087.1 հոդվածի շրջանակներում, այնպես էլ առանձին հոդված նախատեսելով: Իհարկե, նախորդ առաջարկի իրագործման պարագայում ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկմամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հնարավորության հատուկ նախատեսման անհրաժեշտություն չի լինի:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի խորհուրդի Եզրակացություն № 26-11-Ա, Երևան, 08.11.2011, էջ 6-7, URL: <http://www.lex.am/docs/ezrakacutyun%201087.1.pdf> (հղումը կատարվել է՝ 13.04.2018):

[2] **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:

[3] Cambridge Dictionary, URL:<https://dictionary.cambridge.org/dictionary/english/defame> (Accessed: 01.04.2018), English Oxford Living Dictionaries, URL: <https://en.oxforddictionaries.com/definition/defamation> (Accessed: 01.04.2018).

[4] **Эрделевский А. М.**, Компенсация морального вреда: анализ и комментарий законодательства и судебной практики, Wolters Kluwer Russia, 2004, с. 143.

[5] **Noonan v. Staples, Inc.**, No. 07-2159 (1st Cir. 2009), Justia US Law, URL: <https://law.justia.com/cases/federal/appellate-courts/ca1/07-2159/07-2159p2-01a-2011-02-25.html> (Accessed: 16.04.2018). **Anne S. Y. Cheung**, Open Access Laws, Revisiting Privacy and Dignity: Online Shaming in the Global E-Village, 2014.

- [6] **Posner R. A.**, University of Chicago Law School, Chicago Unbound, 1979, Privacy, Secrecy and Reputation. **Maralyan A.**, Tufts University Fletcher School of Law and Diplomacy, Comparative Analysis of the Protection of Private Life of Public Officials and Public Figures Guaranteed by the Constitution of the United States and European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, 2012, URL: <http://law.aua.am/files/2012/03/PAPER.pdf>. **Karako v. Hungary**, no 39311/05, ECHR, 28/07/2009. **A v. Norway**, no 34438/04, ECHR, 16.04.2009; Protection of Reputation, Press Unit, ECHR, March 2018, URL: [https://www.echr.coe.int/Documents/FS\\_Reputation\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/FS_Reputation_ENG.pdf) (Accessed: 12.04.2018):
- [7] ՀՀ Սահմանադրություն, ընդունված՝ 05.07.1995 թ., ուժի մեջ է մտել 13.07.1995 թ., վերջին փոփոխություններն ընդունվել են 06.12.2015 թ., ուժի մեջ մտել՝ 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21, Հատուկ թողարկում, Հոդված 1118:
- [8] «Փոփոխված Սահմանադրություն. անձնական իրավունքներ. մաս 2-րդ», Հայկական իրավական տեղեկատու, Legal Portal, 16.02.2016, URL: <http://legalportal.am/cat/viewnews/2296> (Accessed: 12.04.2018).
- [9] German Criminal Code in the Version Promulgated on 13 November 1998, Federal Law Gazette [Bundesgesetzblatt] I p. 3322, Last Amended by Article 1 of the Law of 24 September 2013, Federal Law Gazette I p. 3671 and with the Text of Article 6 (18) of the Law of 10 October 2013, Federal Law Gazette I p. 3799, Chapter 14, Section 186-7, URL: [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_stgb/englisch\\_stgb.html#p1703](https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html#p1703).
- [10] International Press Institute, MediaLaws Database, URL: <http://legaldb.freemedia.at/legal-database/austria/?target=civil-defamation>.
- [11] Гражданский кодекс Российской Федерации, 21.10.1994, N 51-ФЗ (ред. от 29.12.2017), Статья 152, URL: [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_5142/1de6cd3cbb386056a2ecd2c64ff087b13c8de585/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/1de6cd3cbb386056a2ecd2c64ff087b13c8de585/) (дата обращения: 12.04.2018).
- [12] Criminal Code of the Czech Republic, 40/2009 Coll. ACT of 8 January 2009, Division 2, Section 184.
- [13] Criminal Law of the Republic of Latvia (1998, amended 2013), Chapter XV, Section 157, URL: [file:///C:/Users/Home/Downloads/Latvia\\_CC\\_am2013\\_en.pdf](file:///C:/Users/Home/Downloads/Latvia_CC_am2013_en.pdf).
- [14] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1087.1, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):
- [15] **Dearden R., Wagner W.**, Canadian Libel Law Enters the 21st Century: The Public Interest Responsible Communication Defense, էջ 353, URL: [https://commonlaw.uottawa.ca/ottawa-law-review/sites/commonlaw.uottawa.ca.ottawa-law-review/files/16\\_41ottawalrev3512009-2010.pdf](https://commonlaw.uottawa.ca/ottawa-law-review/sites/commonlaw.uottawa.ca.ottawa-law-review/files/16_41ottawalrev3512009-2010.pdf) (Accessed: 12.04.2018).
- [16] The News Manual, Defamation in Australia, URL: [https://www.thenewsmanual.net/Resources/medialaw\\_in\\_australia\\_02.html](https://www.thenewsmanual.net/Resources/medialaw_in_australia_02.html).

[17] «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 18.05.2015 թ., ուժի մեջ մտել՝ 01.07.2015 թ., ՀՀՊՏ 2015.06.18/35 (1124), Հոդված 462:

[18] Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն ընդունվել է 06.12.1985 թ., ուժի մեջ մտել՝ 01.06.1986 թ., ՀՍՍՀԳՍ 1985/23:

[19] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 144, ընդունվել է 18.04.2003 թ., ուժի մեջ մտել՝ 01.08.2003 թ., ՀՀՊՏ 2003.05.02/25(260), Հոդված 407:

## Դրմեյան Լիլի

### **ՍՏՈՒՅԳ ՓԱՍՏԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԱՆՎԱՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Քանալի բառեր՝** ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկում, դիֆամացիա, պատիվ, արժանապատվություն, գործարար համբավ, հեղինակություն, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունք, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք, հեղինակության պաշտպանության իրավունք, ոչ նյութական վնասի հատուցում:

Ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկմամբ միաժամանակ խախտվում են անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և հեղինակության պաշտպանության իրավունքները, քանի որ մասնավոր կյանքին վերաբերող որոշակի փաստեր չհրապարակելու շահագրգռվածությունը նպատակ ունի պաշտպանելու անձի հեղինակությունը:

Հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել բացահայտելու ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկման համար իրավական պատասխանատվության էությունը և առանձնահատկությունները, ինչպես նաև դրա ներդրման հնարավորությունը ներպետական օրենսդրության մեջ: Արդյունքում, ներկայացվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի առարկայական որոշ խնդիրներ և դրանց լուծման առաջարկներ:

## **ОСОБЕННОСТИ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ДОСТОВЕРНУЮ ДИФФАМАЦИЮ**

**Ключевые слова:** достоверная диффамация, честь, достоинство, деловая репутация, право на неприкосновенность частной и семейной жизни, право на неприкосновенность чести и доброго имени, право на защиту репутации, право на уважение частной и семейной жизни, компенсация неимущественного вреда.

При достоверной диффамации одновременно нарушаются право на уважение частной и семейной жизни и право на защиту репутации, так как личная заинтересованность человека в неразглашении некоторых фактов о своей частной жизни направлена на защиту его репутации.

В статье была предпринята попытка раскрыть сущность и особенности юридической ответственности за достоверную диффамацию, а также возможность ее внедрения в государственное законодательство. В связи с этим были представлены некоторые существенные проблемы, связанные с Гражданским кодексом РА, а также были выдвинуты предложения по их решению.

Drmeyan Lili

## **SPECIFIC FEATURES OF LIABILITY FOR RELIABLE DEFAMATION**

**Key words:** defamation based on true facts, honor, dignity, business reputation, the right to inviolability of his or her private and family life, the right to inviolability of honor and good reputation, the right to respect for private and family life, the right to protection of reputation, non-pecuniary damages.

Reliable defamation simultaneously violates both the right to respect for private and family life and the right to protection of reputation, as individuals have personal interests in not disclosing certain facts of private life in order to protect their reputation.

The article has attempted to disclose the essence and specific features of legal liability for reliable defamation, as well as the possibility of its incorporation into the domestic legislation. Thereon, the article touches upon some significant issues related to the RA Civil Code and provides suggestions for their solution.